ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Վայք **13/09/2024**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 12
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 9 անդամներ:

Բացակա էին՝ Թարո Ավետյանը, Սիմոն Բաբայանը, Սոնա Կարապետյանը, Աստղիկ Հակոբյանը, Կառլեն Մինասյանը, Եվա Մովսիսյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Մխիթար Մաթեվոսյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Անուշ Ղազարյանը

Լսեցին
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 13-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՈՒՇ ՂԱԶԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով.

1.Վայք համայնքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 13-ի թվով 12-րդ հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին /զեկուցող՝ Ա.Ղազարյան/:
2. Վայք համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելուն համաձայնություն տալու, տարեկան վարձավճարի չափը և պայմանները հաստատելու մասին /զեկուցող՝ Ս.Իխտիարյան/:
3. Վայք համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդային եղանակով օտարելուն համաձայնություն տալու, վաճառքի մեկնարկային գներն ու պայմանները սահմանելու մասին /զեկուցող՝ Ս.Իխտիարյան/:
4. Վայք համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին /զեկուցող՝ Ս.Իխտիարյան/:
5. Վայք համայնքի Զառիթափ բնակավայրի վարչական տարածքում երկրաբանական

ուսումնասիրության աշխատանքներին նախնական համաձայնություն տալու մասին /զեկուցող՝ Ս.Իխտիարյան/:
6. Վայք համայնքի Արին բնակավայրի վարչական տարածքում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներին նախնական համաձայնություն տալու մասին /զեկուցող՝ Ս.Իխտիարյան/:
7. Վայք համայնքի 2024 թվականի բյուջեի ծրագրային և ծախսերի տնտեսագիտական հոդվածների միջև վերաբաշխում կատարելու մասին /զեկուցող՝ Ա.Հովսեփյան/:
8. Դրամական օգնություն տրամադրելու մասին /զեկուցող՝ Ն.Հովակիմյան/:
9.Վայք համայնքի տարածքում գտնվող ծառերը հատելուն թույլտվություն տալու մասին /զեկուցող՝ Գ.Գևորգյան/:
10.Վայք համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը և ժամը սահմանելու մասին /զեկուցող՝ Ա.Ղազարյան/:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 90-Ա/

Լսեցին
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ՏԱՐԵԿԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍԱՄՎԵԼ ԻԽՏԻԱՐՅԱՆ/

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի հիման վրա, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 46-րդ, 48-րդ հոդվածներին և 76-րդ հոդվածի 3-րդ մասին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետին համապատասխան՝

1. Տալ համաձայնություն.

ա/Վայք համայնքի տարածքում գտնվող համայնքային սեփականություն համարվող Գոմք բնակավայրում գտնվող գյուղատնտեսական նպատակային նշանակության 1.93407 հա մակերեսով հողամասը (հողատեսքը՝ արոտավայր, կադաստրային ծածկագիրը՝ 10-019-0317-0053) մրցույթային եղանակով վարձակալության
իրավունքով օգտագործման տրամադրելու մասին Վայք համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ հաստատելով վարձակալությամբ
օգտագործման տրամադրելու նպատակը՝ գյուղատնտեսական գործունեության համար, տարեկան վարձավճարի չափը՝ 18 000 (տասնութ հազար) ՀՀ դրամ, հողամասը վարձակալմամբ օգտագործելու ժամկետը՝ 25 (քսանհինգ) տարի:

բ/Վայք համայնքի տարածքում գտնվող համայնքային սեփականություն համարվող Արտավան բնակավայրում գտնվող գյուղատնտեսական նպատակային նշանակությամբ 0.17857 հա մակերեսով հողամասը (հողատեսքը՝ արոտավայր, կադաստրային ծածկագիրը՝ 10-011-1132-0051) մրցույթային եղանակով վարձակալության
իրավունքով օգտագործման տրամադրելու մասին Վայք համայնքի ղեկավարի

առաջարկությանը՝ հաստատելով վարձակալությամբ
օգտագործման տրամադրելու նպատակը՝ գյուղատնտեսական գործունեության համար, տարեկան վարձավճարի չափը՝ 5 000 (հինգ հազար) ՀՀ դրամ, հողամասը վարձակալմամբ օգտագործելու ժամկետը՝ 25 (քսանհինգ) տարի:

գ/Վայք համայնքի տարածքում գտնվող համայնքային սեփականություն համարվող Արտավան բնակավայրում գտնվող գյուղատնտեսական նպատակային նշանակությամբ 0.08420 հա մակերեսով հողամասը (հողատեսքը՝ արոտավայր, կադաստրային ծածկագիրը՝ 10-011-0317-0000) մրցույթային եղանակով վարձակալության
իրավունքով օգտագործման տրամադրելու մասին Վայք համայնքի ղեկավարի
առաջարկությանը՝ հաստատելով վարձակալությամբ
օգտագործման տրամադրելու նպատակը՝ գյուղատնտեսական գործունեության համար, տարեկան վարձավճարի չափը՝ 2 000 (երկու հազար) ՀՀ դրամ, հողամասը վարձակալմամբ օգտագործելու ժամկետը՝ 25 (քսանհինգ) տարի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 91-Ա/

Լսեցին
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ՎԱՃԱՌՔԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍԱՄՎԵԼ ԻԽՏԻԱՐՅԱՆ/

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի հիման վրա, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի «գ» ենթակետին և 22-րդ կետին համապատասխան՝

1. Համաձայնություն տալ՝

1.1/ Վայք համայնքի Վայք քաղաքի Ջերմուկի խճուղի 61/1 հասցեում գտնվող 10-003-0037-0048 կադաստրային ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող (վկայական՝ 09092024-10-0005, գաղտնաբառ՝ 5HBY62MBUINH) հողամասը (նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման, մակերեսը՝ 0,02926 հա) բնակելի կառուցապատման գործունեության նպատակով աճուրդային եղանակով օտարելու մասին Վայք համայնքի ղեկավարի առաջարկությանը. հողամասի վաճառքի մեկնարկային գինը սահմանել 549 420 (հինգ հարյուր քառասունինը հազար չորս հարյուր քսան) ՀՀ դրամ:

1.2/ Վայք համայնքի Վայք քաղաքի Կամոյի փողոց,1-ին նրբանցք, 1/1 հասցեում գտնվող 10-003-00084-01063 կադաստրային ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող (վկայական՝ 09092024-10-0009, գաղտնաբառ՝ AMAIEPCUJA84) հողամասը (նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման, մակերեսը՝ 0,06409 հա) բնակելի կառուցապատման գործունեության նպատակով աճուրդային եղանակով օտարելու մասին Վայք համայնքի ղեկավարի առաջարկությանը. հողամասի վաճառքի

մեկնարկային գինը սահմանել 1 203 500 (մեկ միլիոն երկու հարյուր երեք հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ:

1.3/ Վայք համայնքի Վայք քաղաքի Ջերմուկի խճուղի, 49/30 հասցեում գտնվող 10-003-00264-0037 կադաստրային ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող (վկայական՝ 19062024-10-0024, գաղտնաբառ՝ 8ACYKY5Z1QJF) հողամասը (նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման, մակերեսը՝ 0,00331հա) հասարակական կառուցապատման գործունեության նպատակով աճուրդային եղանակով օտարելու մասին Վայք համայնքի ղեկավարի առաջարկությանը. հողամասի վաճառքի մեկնարկային գինը սահմանել 62 200 (վաթսուներկու հազար երկու հարյ) ՀՀ դրամ:

1.4/ Վայք համայնքի Վայք քաղաքի Ջերմուկի խճուղի,24/5 հասցեում գտնվող 10-003-0004-0407 կադաստրային ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող (վկայական՝ 29082024-10-0014, գաղտնաբառ՝ B866HMHXPZFM) հողամասը (նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման, մակերեսը՝ 0,00633 հա) հասարակական կառուցապատման գործունեության նպատակով աճուրդային եղանակով օտարելու մասին Վայք համայնքի ղեկավարի առաջարկությանը. հողամասի վաճառքի մեկնարկային գինը սահմանել 118 900 (մեկ հարյուր տասնութ հազար ինը հարյուր) ՀՀ դրամ:

1.5/ Վայք համայնքի Սարավան բնակավայրի Սարալանջ թաղամաս, 12/1 հասցեում գտնվող 10-039-0103-0013 կադաստրային ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող (վկայական՝ 20082024-10-0017, գաղտնաբառ՝ 18QLD2XW8G8C) հողամասը (նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման, մակերեսը՝ 0,0023հա) հասարակական կառուցապատման գործունեության նպատակով աճուրդային եղանակով օտարելու մասին Վայք համայնքի ղեկավարի առաջարկությանը. հողամասի վաճառքի մեկնարկային գինը սահմանել 5000 (հինգ հազար) ՀՀ դրամ:

1.6/ Վայք համայնքի Վայք քաղաքի Ջերմուկի խճուղի, 15/17 հասցեում գտնվող 10-003-0010-0133 կադաստրային ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող (վկայական՝ 17052024-10-0051, գաղտնաբառ՝ QEBYXYPBMTNG) հողամասը, (նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման, մակերեսը՝ 0,01407 հա) հասարակական կառուցապատման գործունեության նպատակով աճուրդային եղանակով օտարելու մասին Վայք համայնքի ղեկավարի առաջարկությանը. հողամասի վաճառքի մեկնարկային գինը սահմանել 264 200 (երկու հարյուր վաթսունչորս հազար երկու հարյուր) ՀՀ դրամ:

1.7/ Վայք համայնքի Վայք քաղաքի Ջերմուկի խճուղի, 51/23 հասցեում գտնվող 10-003-0024-0000 կադաստրային ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող (վկայական՝ 00-10-0000, գաղտնաբառ՝ ,,,,) հողամասը, (նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման, մակերեսը՝ 0,00081 հա) հասարակական կառուցապատման գործունեության նպատակով աճուրդային եղանակով օտարելու մասին Վայք համայնքի ղեկավարի առաջարկությանը. հողամասի վաճառքի մեկնարկային գինը սահմանել 15 200 (տասնհինգ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ:

1.8/ Վայք համայնքի Վայք քաղաքի Շահումյան փողոց, 1-ին նրբանցք, 25 հասցեում գտնվող 10-003-0024-0000 կադաստրային ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող (վկայական՝ 00-10-0000, գաղտնաբառ՝ ,,,,) հողամասը, (նպատակային նշանակությունը՝

բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման, մակերեսը՝ 0,0036 հա) բնակելի կառուցապատման գործունեության նպատակով աճուրդային եղանակով օտարելու մասին Վայք համայնքի ղեկավարի առաջարկությանը. հողամասի վաճառքի մեկնարկային գինը սահմանել 67 600 (վաթսունյոթ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 92-Ա/

Լսեցին
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍԱՄՎԵԼ ԻԽՏԻԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 7-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14.3-րդ հոդվածի 9-րդ մասով , Կառավարության 2021 թվականի հունիսի 17-ի «Գյուղատնտեսական նշանակության հողերը ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի փոխադրման դեպքերը սահմանելու մասին» N 987-Ն որոշման 9-րդ կետով,

1. Տալ համաձայնություն՝

1.1 Վայք համայնքի Նոր Ազնաբերդ բնակավայրի 1-ին փողոց, 22 հասցեում գտնվող, Վայք համայնքի բնակիչ Հմայակ Ֆռանսի Ռուշանյանի սեփականություն հանդիսացող 10-034-0002-0002 կադաստրային ծածկագրով, 0.01561 հա մակերեսով, էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության (գործառնական նշանակությունը՝ էներգետիկայի) հողամասի նպատակային նշանակությունը փոխել որպես բնակավայրերի (գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) նպատակային նշանակության հողերի, բնակելի տուն կառուցելու համար:

1.2 Վայք համայնքի Նոր Ազնաբերդ բնակավայրում գտնվող, Վայք համայնքի բնակիչ Սամվել Սերյոժայի Գևորգյանի սեփականություն հանդիսացող 10-034-0112-0013 կադաստրային ծածկագրով, 0.2196 հա մակերեսով, գյուղատնտեսական
նպատակային նշանակության (հողատեսքը՝ այգի) հողամասից 0.05 հա
հողամասի նպատակային նշանակությունը փոխել որպես բնակավայրերի նպատակային նշանակության (գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) հողերի, բնակելի տուն կառուցելու համար:

2. Հաստատել՝
2.1 Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի՝ ս/թ հուլիսի 26-ի N 2/փ312 դրական եզրակացությունը՝ Վայք համայնքի Հերհեր բնակավայրում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, գյուղատնտեսական նպատակային նշանակության, 10-028-0172-0014 կադաստրային ծածկագրով, 0,1 հա մակերեսով հողամասի,հողատեսքը՝ այլ, նպատակային նշանակությունները փոխել որպես

բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման, նպատակային նշանակության հողերի:

2.2 Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի՝ ս/թ հուլիսի 16-ի N 2/փ-288 դրական եզրակացությունը՝ Վայք համայնքի Սերս բնակավայրում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, 10-040-0006-0017, կադաստրային ծածկագրով, 0.22842 հա մակերեսով հողամասի, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական
օբյեկտների, նպատակային նշանակությունը փոխել որպես բնակավայրերի նպատակային նշանակության, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման:

2.3 Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի՝ ս/թ օգոստոսի 9-ի N 2/փ 322 դրական եզրակացությունը՝ Վայք համայնքի Նոր Ազնաբերդ բնակավայրում գտնվող, քաղաքացու սեփականություն հանդիսացող, գյուղատնտեսական նպատակային նշանակության, 10-034-0112-0058 կադաստրային ծածկագրով, 0,301 հա մակերեսով հողամասի, հողատեսքը՝ վարելահող, նպատակային նշանակությունը փոխել որպես բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման, նպատակային նշանակության հողերի:

3.Վայք համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 93-Ա/

Լսեցին
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՋԱՌԻԹԱՓ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍԱՄՎԵԼ ԻԽՏԻԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ և 6-րդ մասերով և հիմք ընդունելով 2024 թվականի օգոստոսի 16-ին կայացած հանրային լսման արձանագրությունը,

1. Տալ նախնական համաձայնություն «ԳՈԼԴ ՄԱՅՆԻՆԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ Վայք համայնքի Զառիթափ բնակավայրի վարչական

տարածքում գտնվող՝ «Գուարջի (Ծակքար)» կոչվող տարածքում նախատեսվող մետաղական օգտակար հանածոների երկրաբանական ուսումնասիրության և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման աշխատանքներ իրականացնելու համար:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 94-Ա/

Լսեցին
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍԱՄՎԵԼ ԻԽՏԻԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ և 6-րդ մասերով և հիմք ընդունելով 2024 թվականի օգոստոսի 12-ին կայացած հանրային լսման արձանագրությունը,

1. Տալ նախնական համաձայնություն «ՄՎ ՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ Վայք համայնքի Արին բնակավայրի վարչական տարածքում գտնվող՝ «Ազիզբեկովի» բազալտների հանքավայրի արդյունահանման ուսումնասիրության և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման աշխատանքներ իրականացնելու համար:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 95-Ա/

Լսեցին
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԱՄ ՀՈՎՍԵՓՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից Վայք համայնքի բյուջեին կապիտալ սուբվենցիայի տրամադրման,
ինչպես նաև հողերի օտարման հետևանքով եկամուտների ավելացման հանգամանքը և ելնելով համայնքի կարիքների համար կապիտալ ծախսերի իրականացման անհրաժեշտությունից,

1.Բյուջետային եկամուտներում կատարել 12281960 ՀՀ դրամի չափով ավելացում, որից՝

ա)Բյուջետային եկամուտների տնտեսագիտական դասակարգման 8411 «-հողի իրացումից մուտքեր» հոդվածի տարեկան գումարն ավելացնել 3 400 000 ՀՀ դրամով՝ սահմանելով 120 400 000 ՀՀ դրամ:

բ)Բյուջետային եկամուտների տնտեսագիտական դասակարգման 7332 «-կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ» հոդվածի տարեկան գումարն ավելացնել 8 881 960 ՀՀ դրամով՝ սահմանելով 193068361.5 ՀՀ դրամ:

2. Բյուջետային ծախսերում կատարել 12281960 ՀՀ դրամի չափով ավելացումներ, որից՝

ա)Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 01 բաժնի 01 խմբի 01 դասի տնտեսագիտական դասակարգման 5122 «-Վարչական սարքավորումներ » հոդվածի տարեկան գումարն ավելացնել 597513 ՀՀ դրամով՝ սահմանելով՝ 792513 ՀՀ դրամ:

բ)Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 01 բաժնի 06 խմբի 01 դասի տնտեսագիտական դասակարգման 5134 «-Նախագծահետազոտական ծախսեր» հոդվածի տարեկան գումարն ավելացնել 1 000 000 ՀՀ դրամով՝ սահմանելով՝ 2 650 000 ՀՀ դրամ:

գ)Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 04 բաժնի 05 խմբի 01 դասի տնտեսագիտական դասակարգման 5113 «-Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» հոդվածի տարեկան գումարն ավելացնել 10 684 447 ՀՀ դրամով՝ սահմանելով՝ 358 179 110.3 ՀՀ դրամ:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 96-Ն/

Լսեցին
ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Վայք համայնքի ավագանու 2022 թվականի մայիսի 13-ի «Վայք համայնքում սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծելու չափորոշիչները սահմանելու մասին» N 12-Ն որոշմամբ հաստատված կարգով
և հիմք ընդունելով Վայք համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու գործընթացն ապահովելու հարցերի մշտական հանձնաժողովի թիվ 10 արձանագրությունը՝

1. Վայք համայնքի 2024 թվականի բյուջեի «Սոցիալապես անապահով անձանց աջակցություն» /4729/ հոդվածից դրամական օգնություն տրամադրել Վայք համայնքի հետևյալ բնակիչներին՝

1.1 Ալիկ Օհանի Օհանյան՝ 100 000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ
1.2 Արամ Անանիայի Հովակիմյան՝ 100 000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ
1.3 Լուսինե Հայկարամի Գևորգյան՝ 30 000(երեսուն հազար) ՀՀ դրամ,
1.4 Սևակ Լեոնիկի Ասատրյան՝ 30 000(երեսուն հազար) ՀՀ դրամ,
1.5 Աշոտ Արտաշեսի Սարգսյան՝ 30 000(երեսուն հազար) ՀՀ դրամ,

1.6 Երանուհի Աթաբեկի Աթաբեկյան՝ 30 000(երեսուն հազար) ՀՀ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 97-Ա/

Լսեցին
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԾԱՌԵՐԸ ՀԱՏԵԼՈՒՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳԱՐԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ և 42-րդ կետերի պահանջներով.

1.Թույլատրել հատել Վայք համայնքի տարածքում գտնվող հետևյալ ծառերը՝
1.1 Վայքի համայնքապետարանի վարչական շենքի հետևի պուրակում գտնվող չորացած ծառերը՝ թվով 8 (ութ) սոճի: Սահմանել հատված ծառերի վաճառքի գինը 1խմ-ի համար՝ 20 000 (քսան հազար) ՀՀ դրամ:
1.2 Վայք համայնքի Վայք քաղաքի «Արևիկ» մարզադաշտի շտարածքում գտնվող կոտրված ծառերը՝ թվով 2 (երկու) ուռենի: Ստացված վառելափայտը անհատույց հատկացնել համայնքի անապահով ընտանիքներին:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 98-Ա/

Լսեցին
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ԵՎ ԺԱՄԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍԱՄՎԵԼ ԻԽՏԻԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով՝

1.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի ավագանու հերթական նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2024 թվականի հոկտեմբերի 11-ին, ժամը՝ 16:00-ին:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 99-Ա/

Ավագանու անդամներ

ՀԱՅԿ ԱՎԱԳՅԱՆ

ԱՆՈՒՇ ԱՐԱՄՅԱՆ

ԱՐՏԱՎԱԶԴ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՍՈՒՍԱՆՆԱ ԿՈՍՏԱՆՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ԿՈՍՏԱՆՅԱՆ

ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀՐԱՉԻԿ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

ԱՐՄԻՆԵ ՈՍԿԱՆՅԱՆ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՋԱՆՈՅԱՆ

Համայնքի ղեկավար

ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ Անուշ Ղազարյանը

_____